


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Որդին



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Adapted by: Ruth Klassen; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.





Յիսուս սիրով
կը պատմեր
Ժողովուրդին
Աստուծոյ ներող
ըլլալուն մասին:
Բայց տաճարի
առաջնորդները
կը գանգատէին իր
բարեկամութենէն
մեղաւորներուն
հետ:




Ուրեմն Յիսուս երեք
պատմութիւններ
պատմեց, որ ցոյց
տայ, թէ Աստուած
ուրախ կ'ըլլայ երբ
մեղաւորները ետ
դարձի գան եւ
դադրին մեղք
գործելէ:



Առաջին պատմութիւնը մարդու մը
մասին, որ հարիւր ոչխար ուներ:

Մէկ հատը
կորսուեցաւ:

Արագօրէն հովիւը
ձգեց ինիսունինը
եւ գնաց փնտռելու
համար
կորսուած
ոչխարը:





Հովիւը փնտռեց
եւ փնտռեց մինչեւ
որ գտաւ ոչխարը:
Յետոյ իր ուսերուն
վրայ առաւ եւ
ուրախօրէն տուն
տարաւ: Ան իր
ընկերներուն
պատմեց.

"Հետս ուրախ
եղէք, որովհետեւ
գտայ իմ
կորսուած
ոչխարս":



Յիսուս
բացատրեց, որ
մեծ ուրախութիւն
կ'ըլլայ երկինքին
մէջ, երբ մէկ
մեղաւոր ետ
դառնայ:





Յիսուսի յաջորդ
պատմութիւնը
կնկայ մը մասին
էր, որ տասը
արժաթ դրամ
ունէր թերեւս իր
կեանքի բոլոր
հաւաքածը:
Յաւալի բան մը
պատահեցաւ: Ան
իր մէկ արժաթը
կորսնցուց:




Վա՛յ, վա՛յ, վա՛յ: Կինը
ամեն տեղ փնտռեց:



Վերջապես ան գտաւ իր
կորսնցուցած արծաթ դրամը: Ան
շատ ուրախ էր: Գիտէ՞ք ինչ ըրաւ
ան: Այո, ան պատմեց իր բոլոր
բարեկամներուն:





Նորէն
Յիսուս ըսաւ.
"Երջանկութիւն
կայ Աստուծոյ
հրեշտակներուն
ներկայութիւնը
մէկ մեղաւորի
վրայ, որ կը
զղջայ":



Երրորդ պատմութիւնը, զոր
Յիսուս պատմեց տխուր
պատմութիւն մըն էր:
Ան կը խօսէր տղու մը
մասին, որ իր հօրը
տունը ձգեց:



Յեռու երկրի մը մէջ տղայ մը իր բոլոր դրամները
անխելքօրէն ծախսեց: Յիմա ի՞նչ ընել: Աւելի
բարդացնելու համար կացութիւնը, սով ալ
կը տիրէ: Տղան անօթի կը մնայ մինչեւ մահ:




Յուսախար եւ անօթի, տղան խոզեր կերակրելու գործ մը կը գտնէ: Բայց մէկը զինք չի կերակրեր: Ան շատ սիրով պիտի ուտեր խոզերուն կերակուրէն: Թերեւս ալ կերաւ: Վերջապէս տղան ինքզինք կը գտնէ, եւ խելքը կ'աշխատցնէ: "Հօրս տունը, նոյնիսկ սպասաւորները լաւ կ'ուտեն" կը մտածէ:




"Ես տուն պիտի
դառնամ հորս ըսելու,
որ ներք ինձի իմ գործած
մեղքերուն համար: Ես այլևս
արժանի չեմ իր տղան
ըլլալու: Յուսամ,
որ ան զիս իբր
սպասաւոր քովը
կ'աշխատոցնէ":



Մինչ տակաւին տղան հեռու էր իր հօր տունէն,
անոր հայրը տեսաւ զինք: Ուրախութեամբ
լեցուած, հայրը տուն դարձող տղուն քով
վազեց: Ան համբուրեց
եւ փաթթուեցաւ անոր:





"Չայրիկ, ես մեղք
գործեցի: Ես արժանի
չեմ քու տղադ ըլլալու",
Տղան կ'ուզէր, որ հայրը
զինք իբրեւ ծառայ քովը
աշխատցնէ: "Սակայն
հայրը միջամտեց, բերեք
ամենալաւ զգեստները
եւ ոտնամանները,
եւ մատանի իմ
տղուս, եւ մեծ
խրախճանք
պատրաստեցէք":



Չաճելի խրախճանք մը սարքուեցաւ
տղուն համար, որ կորսուած էր եւ գտնուեցաւ:



Յիսուս, պատմեց
այս պատմութիւնը,
որպէսզի ցոյց տայ,
թէ Աստուած
որքան կը սիրէ
մեղաւորները,
որոնք զղջում
կը կատարեն
եւ իրեն կը
դառնան:



Որդին

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 15

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մաթնոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

